Թեմա՝ Թիվ և թվի բնութագրումը, Կարգային միավոր

Օրինակ՝ բնութագրենք 843215 թիվը։
Այն վեցանիշ թիվ է։

- Թվի գրության մեջ կրկնվող թվանշաններ չկան։
- Կենտ թիվ է։
  - 5-ը ցույց է տալիս, որ այդ թվի միավորների կարգում (1-ին կարգ) կա 5 միավոր
  - 1-ը ցույց է տալիս, որ այդ թվի տասնյակների կարգում (2-րդ կարգ) կա 1 տասնյակ
  - 2-ը ցույց է տալիս, որ այդ թվի հարյուրյակների կարգում (3-րդ կարգ) կա 2 հարյուրյակ
  - 3-ը ցույց է տալիս, որ այդ թվի հազարյակների կարգում(4-րդ կարգ) կա 3 հազարյակ
  - 4-ը ցույց է տալիս, որ այդ թվի տասհազարյակների կարգում(5-րդ կարգ) կա 4 տասհազարյակ։
  - 8-ը ցույց է տալիս, որ հարյուրհազարյակների կարգում (6-րդ կարգ) կա 8 հարյուրհազարյակ:

1. Բնութագրե՛ք տրված թվերից յուրաքանչյուրը. 462 3245 46560 25602 256982

2. Գրիր այն հնգանիշ թիվը, որի՝ .

- միավորը 3 է, տասնավորը՝ 7, հարյուրավոր՝ 8, հազարավորը՝ 5, տասհազարավորը՝ 2:
- տասնավորը 0 է, հազարավորը՝ 7, իսկ մյուս բոլոր թվանշանները՝ 3:
- հարյուրավորը 5 է, հազարավորը՝ 8, իսկ մյուս բոլոր թվանշանները՝

3. Լուծիր՝

- Երկու թվերից մեկը մյուսից մեծ է 125-ով: Որքան է այդ թվերի տարբերությունը:
- Երկու թվերից մեկը մյուսից փոքր է 753-ով: Որքանով է փոքրը մեծից փոքր:
- Երկու թվերի քանորդը 3 է: Քանի անգամ է մեծը փոքրից մեծ:

4. Կարգային գումարելիների գումարը գրիր թվի տեսքով՝

8 հազ. + 2հ. +3տ.+7մ.

5. Գրիր այն թիվը, որը կազմված է՝

- 8 հազարյակից, 2 հարյուրյակից և 6 միավորից:
- 4 տասհազարյակից, 9 հազարյակից և 6 միավորից:
- 3 հարյուրհազարյակից, 5 հազարյակից և 7 միավորից:

6. Որքանով կմեծանա 123 թիվը, եթե նրա գրության երրորդ կարգում գրված թվանշանը փոխարինենք 7-ով:

7. Որքանով կմեծանա եռանիշ թիվը, եթե նրա գրությանը ձախից կցագրենք 7 թվանշանը: Գրիր օրինակներ:

8. Հայկը ձմերուկի համար վճարել է 1400 դրամ, իսկ սեխի համար՝ 2 անգամ պակաս: Հայկը որքա՞ն է վճարել այդ գնումների համար:

9. «Հին աշխարհի յոթ հրաշալիքները» գիրքն արժե 3000 դրամ: Այն 900 դրամով թանկ է Աստրիդ Լինդգրենի «Երկարագուլպա Պիպին» գրքից: Որքա՞ն արժեն այդ երկու գրքերը միասին:

10. Եթե Կարենին տանք այնքան կոնֆետ, որքան ունի նա, և էլի մեկ կոնֆետ, ապա կունենա 25 կոնֆետ: Քանի՞ կոնֆետ ունի կարենը: